ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ավիացիոն անվտանգության վարչության փորձագետ Զոյա Գասպարյանի կողմից 2019 թվականի նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ

2019 թվականի նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել/իրականացրել եմ.

- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի բեռնային համալիրում ԻԿԱՕ ավիացիոն անվտանգության աուդիտի խմբի կողմից հայտնաբերված թերությունների վերացման նկատմամբ վերահսկողության իրականացման աշխատանքներին, մասնավորապես թվով վեց տեսչական ստուգման, դրանց մասին հաշվետվությունների կազմանն ու դրանք ԻԿԱՕ ներկայացմանը:
- ԻԿԱՕ Ավիացիոն անվտանգության աուդիտի արդյունքների թերությունների և անհամապատասխանությունների վերացման ժամանակացույցի կազման աշխատանքներին:
- ԻԿԱՕ Ավիացիոն անվտանգության աուդիտի արդյունքների թերությունների և անհամապատասխանությունների շտկման, ինչպես նաև ԻԿԱՕ և ԵԿԱԿ կազմակերպությունների կողմից սահմանված նոր ստանդարտների և չափորոշիչների ներդրման նպատակով, համապատասխան նորմատիվ իրավական ակտերի ուսումնասիրման և դրանցում փոփոխությունների առաջարկների ներկայացման աշխատանքներին:
- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հատուկ վերահսկելի գոտում և ընդհանուր սրահներում ժամանող/մեկնող ուղևորների սպասարկման աշխատանքների նկատմամբ պարբերաբար վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև օդանավակայանային ծառայությունների աշխատողների կողմից ուղևորների առանց հսկողության թողնված ուղեբեռների նկատմամբ ցուցաբերած մոտեցումների դիտարկման աշխատանքներին:
- Վերահսկողություն է իրականացվել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում բորտսննդի ծառայություններ մատուցող աշխատակիցների, ուղևորների հաշվառման ծառայության, օդանավերի վերգետնյա սպասարկման, բեռնակրման ծառայություններ մատուցող կազմակերպության, ուղևորների ուղեբեռների փոխադրման ծառայություններ մատուցող ծառայության, օդանավակայանի ընդհանուր սրահներում մաքրման ծառայություններ մատուցող աշխատակիցների ավիացիոն անվտանգության մասով անցկացվող դասընթացների նկատմամբ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի մասին» N1307-Ն որոշման մեջ լրացումները

և փոփոխությունները կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ կազմակերպություններից ստացված դիտողությունների և առաջարկությունների ուսումնասիրմանը, նախագծի լրամշակմանը:

- ՀՀ ՔԱԿ նախագահի հանձնարարականով ուսումնասիրել եմ ավիացիոն անվտանգության մասով «Ատլանտիս Յուրոփիան Էյրվեյզ» ավիաընկերության գրությունը և ֆինանսական վիճակի վերաբերյալ հաշվետվությունը, որի վերաբերյալ ներկայացրել եմ առաջարկություն:
- Ուսումնասիրվել է «Ֆլայ Արմենիա Էյրվեյզ» ավիաընկերության ավիացիոն անվտանգության ծրագիրը և ներկայացվել է եզրակացություն:
- Ուսումնասիրել եմ քաղաքացիների թվով երկու դիմում-բողոք և դրանք հասցեագրել եմ հասցեատիրոջը:

ՀՀ ՔԱԿ ավիացիոն անվտանգության

վարչության փորձագետ Զոյա Գասպարյան